

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Օպերատոր-վարորդ (կոյուղու մեքենայի)

Աշխատանքի վայր

քաղաք Երևան

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Առողջության ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Իրականացնել իրեն ամրակցված հատուկ մեքենա-մեխանիզմի (կոյուղու մաքրման համար նախատեսված հատուկ բեռնատար մեքենա) անվտանգ, խնամքով և նպատակային շահագործումը՝ ջրահեռացման համակարգերի պատշաճ մաքրման աշխատանքների կատարման նպատակով;
- Ծանոթանալ իրեն ամրակցված մեքենա-մեխանիզմի տեխնիկական վիճակին, աշխատանքի ռեժիմին, անսարքությունների դեպքում տեղեկացնել անմիջական ղեկավարին;
- Ժամանակին իրականացնել մեքենա-մեխանիզմի պահպանման հետ կապված բոլոր աշխատանքները;
- Անհրաժեշտության դեպքում իրականացնել մեքենա-մեխանիզմի ընթացիկ վերանորոգման և անխափան շահագործման աշխատանքները;
- Իրականացնել սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նորոգման, կառուցման և վթարների վերացման հետ կապված աշխատանքներ՝ համաձայն ղեկավարության կողմից տրված հանձնարարականների;
- Հետևել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոնների պահպանմանը;
- Խնամքով և պատշաճ օգտագործել Ընկերության կողմից տրամադրված գործիքները, սարքավորումները, անհատական պաշտպանության միջոցները և արտահագուստը:

Պահանջներ

- Ավտոմեքենայի շահագործման գիտելիքներ և ունակություններ
- Վարորդական իրավունք BC
- Ճանապարհատրանսպորտային կանոնների գերազանց իմացություն
- Գործիքների և սարքավորումների օգտագործման կանոնների իմացություն
- Թիմային աշխատանք
- Կարգապահության և բարձր պատասխանատվության զգացում

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV am.water.hr@veolia.com էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **օպերատոր-վարորդ** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին: Հարցազրույցին մասնակցելու համար կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: